



ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

Շաբաթ, 2 Ապրիլ. Սրբոց Մանկանցն Քառասնից Որք ի Սեբաստիայ կատարեցան: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Գլխադիր: Ժամարարն էր Տ. Ներսէճ Աբղ. Ալոյեան: Վերաբերումը կատարեցաւ Քառասուն Մանկանց նկարին առջեւ շրտկւած Սեղանին վրայէն, որուն դիմացը կաթսայի մէջ կը պլպլային քառասուն գոյնզգոյն կանթեղներ, աւանդական սառցապատ լիճը խորհրդանշող:

Կէսօրէ ետք Տ. Սեւան Արք. Ղարիպեանի գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»-ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր Գերեզմանի եւ Գիւտ Խաչի այրին ուխտերէն ետք, վերջնոյս կից՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւն եւ նախատօնակ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան թափօր տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան:

Կիրակի, 3 Ապրիլ. Ե. Կիրակի Քառասնորդաց: Դատաւորին: Առաւօտեան ժամը 6:30-ին միաբան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան տաճար, ուր Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան Ս. Յարութեան տաճարի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքարեան:

Լուսարարապետ Սրբազան Հօր երկրորդ մուտքէն ետք, Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ, օրուան Ս. Պատարագը մատուցեւ քարոզեց Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքարեան: Պատարագէն վերջ Քրիստոսի Ս. Գերեզմանին եւ Պատանատեղւոյն շուրջ կատարուած եռագարձ մեծահանդէս թափօրին, որ աւարտեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, նախագահեց Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Ուրբաթ, 8 Ապրիլ. Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Շաբաթ, 9 Ապրիլ. Սրբոյ Հօրն մերոյ Գրի-

գորի Լուսաւորչին: Յիշատակ Չարչարանաց եւ Մտանելոյն ի Վիրապն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Արշակ Աբղ. Ղազարեան:

Կիրակի, 10 Ապրիլ. Զ. Կիրակի Քառասնորդաց: Գալստեան: Գիշերային ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, ապա միաբան հայրեր ինքնաշարժներով մեկնեցան Նոր Երուսաղէմ՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի: Հանդիսապետն էր Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը: Ժամարարն էր Տ. Վանիկ Ծ. Վրդ. Մանկասարեան: «Հայր Մեր»-էն առաջ քարոզեց Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան:

Հինգշաբթի, 14 Ապրիլ. Երեկոյեան ժամը 7-ին ի Ս. Յակոբ պաշտուեցաւ Մեծ Պահոց «Հանգստեան» վերջին ժամերգութիւնը:

Ուրբաթ, 15 Ապրիլ. Առաւօտեան ի Ս. Յակոբ պաշտուեցաւ Մեծ Պահոց «Արեւագալի» վերջին ժամերգութիւնը:

Շաբաթ, 16 Ապրիլ. Յիշատակ Յարութեան Ղազարու: Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Վազգէն Աբղ. Ալէքեան:

Կէսօրէ ետք Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեանի գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»-ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ապա մեր Վերնամատրան մէջ պաշտուեցաւ Երեկոյեան ժամերգութիւն եւ նախատօնակ: Յետ Երեկոյեան ժամերգութեան եւ նախատօնակի կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր, տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան:

Կիրակի, 17 Ապրիլ. Ծաղկազարդ: Առաւօտեան ժամը 6:15-ին հանդիսապետութեամբ Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքարեանի, միաբան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան Տաճար: Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան մեր Վերնամատրան մէջ, ապա մատուցուեցաւ

Ս. Պատարագ: Պատարագեց եւ քարոզեց Տ. Տիրան Աբղ. Յակոբեան: Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ եռադարձ մեծահանդէս թափօր Քրիստոսի Ս. Գերեզմանին եւ Պատանատեղւոյն շուրջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Թափօրականք ի ձեռին ունէին ձիթեղեղեղ եւ արմաւենեաց ոստեր, իսկ մեր թափօրին կը հետեւէին Ղպտոց եւ Ասորոց թափօրները:

Վանք վերադարձին, հայոց թաղի մուտքէն, Միաբանութիւնը եւ դպիրները «Որ գխորհուրդ» շարականի երգեցողութեամբ բարձրացան Պատրիարքարան:

Նոյն առաւօտեան Ս. Պատարագ մատուցեցաւ նաեւ ի Ս. Հրեշտակապետաց: Պատարագեց եւ քարոզեց Հրեշտակապետաց Վանքի Տեսուչ՝ Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան: Ս. Պատարագէն ետք վանքի շրջափակէն ներս կատարուեցաւ թափօր:

Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ «Դոնբասէք»-ի արարողութեան նախագահեց Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը:

«Դոնբասէք»-ի արարողութիւն կատարուեցաւ նաեւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ:

Երեքշաբթի, 19 Ապրիլ. Աւագ Երեքշաբթի: Յիշատակ տասն կուսանաց: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի գաւիթը գլխաւոր Հայոց Ս. Յովհաննէս Աւետարանչի մատարան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան: Ժամարարն էր Տ. Աղան Աբղ. Գոգչեան: Ապա կատարուեցաւ «Ուխտաւորաց թափօր» տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Գէորգ Աբղ. Հայրապետեան:

Հինգշաբթի, 21 Ապրիլ. Աւագ Հինգշաբթի (Յիշատակ վերջին ընթրեաց): Առաւօտուն, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Կարգ Ապաշխարութեան»:

Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ խորանին վրայ մատուց Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան: «Հայր Մեր»-էն առաջ կարդացուեցաւ Ս. Բարսեղ հայրապետի Հաղորդութեան ճառը՝ գերազանցօրէն վեհ եւ շինիչ խրատներով լեցուն:

Գիշերուան ժամը 7-12, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Խաւարման կարգը»: «Փառք ի բարձունս»-էն ետք Տաճարին խորհրդաւոր մթնութեան մէջ «Յայսմաւուրքի Ամպիոնէն» քարոզեց Տ. Գէորգ Աբղ. Հայրապետեան:

Ժամերգութեան աւարտին Լուսարարապետ

Սրբազան Հայրը նախագահեց եւ կատարեց «Խաչի քո Քրիստոս»-ի խնկարկութիւնը:

Ուրբաթ, 22 Ապրիլ. Աւագ Ուրբաթ (Յիշատակ Չարչարանաց Խաչելութեան եւ Թաղման Տեառն): Կէսօրէ ետք ժամը 1:30-ին, Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամաստան մէջ կատարուեցաւ «Կարգ Խաչելութեան»: Հանդիսապետն էր Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքարեան:

Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Թաղման Կարգ»-ը: Արարողութեանը Նախագահեց Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը: Հանդիսապետեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Շաբաթ, 23 Ապրիլ. Աւագ Շաբաթ (Ճրագալոյց Զատիկի): Առաւօտեան ժամը 9-ին Ս. Յարութեան Տաճարի դուռը բացուեցաւ մեր կողմէ, բանալին առնելով Աւագ Թաղման Տ. Վազգէն Աբղ. Ալէքեանի ձեռքէն:

Ժամը 11-ին Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը, Հ.Յ.Մ-ի եւ Հ.Մ.Ը.Մ-ի սկառուներով եւ նուագախումբերով առաջնորդուած, մեկնեցաւ Ս. Յարութեան տաճար, ուր յաջորդաբար կատարուեցան Լուսաւորեայի յարակից հանդիսութիւնները, սկսելով Ս. Գերեզմանի դռան կնքումէն: Յունաց Թափօրէն ետք, մեր լուսահանը՝ Տ. Ասպետ Ծ. Վրդ. Պալեան, Յունաց Ամեն. Տ. Թէոֆիլոս Պատրիարքին հետ մտաւ Ս. Գերեզման, ուրկէ հինգ վայրկեան յետոյ դուրս տրուեցաւ նուիրական լոյսը, որ ակնթարթի մը մէջ մեր լուսակիրներու կողմէ փոխանցուեցաւ մեր վերնամաստան պատշգամին մէջ իր տեղը գրաւող Լուսարարապետ Սրբազան Հօր, որ լուցեալ մոմերու փունջով օրհնեց Ս. Գերեզմանի շուրջ կանգնած հաւատացեալ ժողովուրդին: Ապա տեղի ունեցաւ եռադարձ թափօր: Թափօրականք երգեցին «Քրիստոս Յարեալ» շարականը: Լուսահան Հայր Սուրբը եպիսկոպոսական խոյրով գլխաւորեց թափօրը:

Մեր թափօրին կը հետեւէին Ղպտոց եւ Ասորոց թափօրները:

Վանք դարձին, դարձեալ սկառուներու նուագախումբով առաջնորդուած, թափօր կազմուեցաւ, լուսահան՝ Տ. Ասպետ Ծ. Վրդ. Պալեան շուրջառագգեստ եւ ապակէ պահպանակի մէջ Ս. Գերեզմանէն լոյսը ի ձեռին թափօրին մէջտեղէն քալելով: Դաւթի Բերդին մօտ Լուսարարապետ Սրբազան Հօր տրուեցաւ շուրջառ, խաչ, գաւազան: Շարականներ երգելով եւ զանգահարութեամբ մուտք գործեցին Մայր Տաճար:

Լուսարարապետ Սրբազան Հայրը, Մայր Տաճարի դասին մէջ կարդաց Ս. Զատկական Աւետարանը եւ «Պահպանիչ»-ով արձակեց ժողովուրդը, աւետելով «Քրիստոս յարեալ ի մեռելոց»:

Ժամ մը ետք, կատարուեցաւ Ճրագալոյցի արարողութիւնը Մայր Տաճարին մէջ: Ս. Պատարագը մատուցեց Ս. Կորին Վրդ. Բաղդասարեան: Ս. Պատարագի աւարտին կատարուեցաւ Նախատօնակ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Սրբազան Հայրը: Ապա, Միաբանութիւնը եւ դպիրներ «Այսօր յարեալ» շարականը երգելով գացին Պարտիզաթաղ ուր տեղի ունեցաւ Տնօրհնէքի արարողութիւն:

Ճրագալոյցի Ս. Պատարագներ մատուցուեցան նաեւ Ս. Յարութեան տաճարին մէջ՝ Ժամարարան էր Ս. Արտէն Քհնյ Աբրահամեան, եւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ՝ Ժամարարն էր Ս. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան:

Կիրակի, 24 Ապրիլ.– Զատիկ Յարութեան Տեառն եւ Յիշատակ Սրբոց Նահատակաց մերոց, որք կատարեցան յընթաց Հայոց Յեղասպանութեան վասն հաւատոյ եւ հայրենեաց: Կէս գիշերէն ետք ժամը 1:45-ին Մայրավանքի մեծ զանգը ոտքի հանեց Միաբանութիւնը, որ Ս. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեանի գլխաւորութեամբ մեկնեցաւ Ս. Յարութեան Տաճար:

Ս. Գողգոթայի ուխտէն ետք, մեր վերնամատրան մէջ պաշտուեցաւ ժամերգութեան մէկ մասը, մինչեւ «Հարց»: Ապա միաբան հայրեր եւ Ժառանգաւոր սաներ զգեստաւորուած իշան Սուրբ Գերեզմանի շրջափակը, ուր պաշտամունքը շարունակուեցաւ եռադարձ թափօրով Գերեզմանի եւ Պատանատեղւոյն շուրջ: Մեր թափօրին կը հետեւէին Ղպտոց եւ Ասորոց թափօրները: Կատարուեցաւ «Անդաստան», իսկ Ս. Գերեզմանին առջեւ «Ճաշի քո Քրիստոս» բաժինի երգեցողութիւնը:

Առաւօտեան ժամը 7-ին Լուսարարապետ Սրբազան Հայրը Միաբան Հայրերու հետ կատարեց հայոց երկրորդ մուտքը Ս. Յարութեան Տաճար, եւ կարճ դադարէ ետք Ս. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքարեան օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցեց եւ քարոզեց Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ:

Վախճարէն հայոց թաղի մուտքէն «Այսօր յարեալ» շարականի երգեցողութեամբ Միաբանութիւնը եւ ժողովուրդը բարձրացան Պատրիարքարան:

Կէսօրէ ետք, Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց Մայրավանքի մեծ բակին մէջ կատարուած Զատկական մեծահանդէս «Անդաս-

տան»-ին:

Երկուշաբթի, 25 Ապրիլ.– Բ. օր Ս. Զատիկի: Յիշատակ մեռելոց: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ խորանին վրայ մատուցեց Լուսարարապետ Ս. Սեւան Արք. Ղարիպեան, քարոզեց Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը: Ս. Պատարագի վերջաւորութեան Լուսարարապետ Սրբազան Հայրը ամպհովանիի ներքեւ Ս. Խաչափայտի մասունքն ի ձեռին, նաեւ Միաբան Հայրեր մասունքներով, դարձան եռադարձ թափօր, որուն աւարտին երգուեցաւ «Ճանապարհ»՝ ուխտաւորներուն բարի ճանապարհ մղթելու համար: Ապա Միաբանութիւնը եւ ժողովուրդը «Այսօր յարեալ» շարականի երգեցողութեամբ բարձրացան Պատրիարքարան, ուր Պատրիարք Սրբազանը բոլորին նշխար բաժնեց:

Երեքշաբթի, 26 Ապրիլ.– Գ. օր Ս. Զատիկի: Յիշատակ մեռելոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Ս. Խաղ Վրդ. Ծոնտուրեան: Ս. Պատարագէն ետք հանդիսապետութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր կատարուեցաւ Հոգեհանգստեան կարգ:

Շաբաթ, 30 Ապրիլ.– Յիշատակ գլխատման Սրբոյն Յովհաննու Կարապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի, աշակողմեան դասին մէջ գտնուող Ս. Կարապետի Սեղանին վրայ: Ժամարարն էր Ս. Ներսէս Արք. Աղոյեան:

Կիրակի, 1 Մայիս.– Նոր Կիրակէ (Կրկնազատիկ): Հստ սովորութեան Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց եւ քարոզեց լուսահան Ս. Ասպետ Ծ. Վրդ. Պալեան:

Կէսօրէ ետք Մայր Տաճարին մէջ կատարուած «Անդաստան»-ին հանդիսապետեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Ուրբաթ, 6 Մայիս.– Նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց նախագահեց Ս. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 7 Մայիս.– Աւետումն Ս. Աստուածածնի: Առաւօտեան Լուսարարապետ Ս. Հօր գլխաւորութեամբ միաբան հայրեր ինքնաշարժներով մեկնեցան Գեթսեմանի պարտէզ եւ «Հրաշափառ»-ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանի վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցեց եւ քարոզեց Ս. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

Ս. Պատարագէն ետք Ս. Աստուածածնի Տաճարի միաբաններէն էրիկ Դպիր Սարգսեան ուրար կրելու իրաւունք ստացաւ ձեռամբ Լուսա-

րարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեանի:

Կէսօրէ ետք Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»-ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցան Երեկոյեան ժամերգութիւնն ու նախատօնակը, մեր վերնամատրան մէջ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան:

Կիրակի, 8 Մայիս. Աշխարհամատրան (Կանաչ Կիւրակէ): Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ մատուցեւ քարոզեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Պատարագի Սրբազան Հայրը Ս. Պատարագի վերջաւորութեան նախագահեց նաեւ Ս. Գերեզմանին առջեւ կատարուած «Անդաստան»-ին:

Շաբաթ, 14 Մայիս. Ս. Պատարագը մատուցեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Արշակ Արք. Ղազարեան:

Կիրակի, 15 Մայիս. (Կարմիր Կիւրակէ) Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի ձախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնի խորանին վրայ: Պատարագեց Տ. Գէորգ Արք. Հայրապետեան:

Կէսօրէ ետք Մայր Տաճարին մէջ կատարուած «Անդաստան»-ին հանդիսապետեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Շաբաթ, 21 Մայիս. Ս. Պատարագը մատուցեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Դիլիշանի Ս. Խաչ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Տ. Շաւարշ Քհնյ Սիմոնեան, որ ուխտաւորաբար քաղաքս կը գլուխուէր:

Կիրակի, 22 Մայիս. Տօն Երեւման Ս. Խաչին: Առաւօտեան ժամերգութեան աւարտին Լուսարարապետ Սրբազան Հայրը ընթերցաւ Ս. Կիրեղ Հայրապետի թուղթը յղուած Կոստանդ կայսեր եւ հանդիսապետեց «Անդաստան»-ի արարողութեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ Աւագ Սեղանին վրայ, որուն վերելը զետեղուած էր վառ կանթեղներով Ս. Խաչին նշանը: Պատարագեց եւ քարոզեց Տ. Վանիկ Ծ. Վրդ. Մանկասարեան:

Շաբաթ, 28 Մայիս. Ս. Պատարագը մատուցեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան:

Կիրակի, 29 Մայիս. Ս. Պատարագը մատուցեցաւ Մայր Տաճարի աջակողմեան դասին մէջ

գտնուող Ս. Կարապետի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան:

Կէսօրէ ետք Մայր Տաճարին մէջ կատարուած «Անդաստան»-ին հանդիսապետեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Չորեքշաբթի, 1 Յունիս. Կէսօրէ ետք Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբան Հայրեր բարձրացան Զիթենեաց լեռ, ուր Համբարձման սրբավայրին մօտ կառուցուած վերանամատրան մէջ պաշտուեցան ժամերգութիւն եւ նախատօնակ:

Երեկոյեան, նոյն վայրին մէջ պաշտուեցան «Եկեցէ»-ի եւ Հսկման կարգերը եւ ապա Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները:

Հինգշաբթի, 2 Յունիս. Համբարձումն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Առաւօտուն Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը ինքնաշարժներով բարձրացաւ Համբարձման լեռ, ուր «Հրաշափառ»-ով կատարուեցաւ պաշտօնական մուտք Սրբավայրէն ներս, եւ Հայկական բաժնի վրանին ներքեւ մատուցեցաւ Ս. Պատարագը: Պատարագեց եւ քարոզեց Տ. Պարետ Ծ. Վրդ. Երէցեան: «Հայր մեր»-էն առաջ Մայր Աթոռոյ Սիսէն Ս. Էջմիածին փոխադրութեան տարեդարձին առթիւ կատարուեցաւ «Հայրապետական մաղթանք»: Պատարագի վերջաւորութեան սրբատեղւոյն առջեւ կատարուած «Անդաստան»-ին հանդիսապետեց պատարագի Հայր Սուրբը:

Շաբաթ, 4 Յունիս. Պատարագը մատուցեցաւ Ս. Յակոբի տանիքը գտնուող Համբարձման մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Վազգէն Արք. Ալէքեան:

Երեկոյեան ժամերգութիւնը եւ նախատօնակը պաշտուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Կիրակի, 5 Յունիս. Երկրորդ Ծաղկազարդ: Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնը կատարուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Տ. Տիրան Արք. Յակոբեան:

Շաբաթ, 11 Յունիս. Ս. Պատարագը մատուցեցաւ Ս. Յակոբի տանիքը գտնուող Ս. Առաքելոց մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Աղան Արք. Գոգչեան:

Հոգեգալստեան նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Գիշերասկզբին Մայր Տաճարին մէջ պաշտ-

լած «Եկեցե՛ք»-ի եւ Հսկման կարգերուն նախագահեց Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Կիրակի, 12 Յունիս. Հոգեգալուստ: Առաւօտեան ժամերգութեան աւարտին հանդիսապետութեամբ Տ. Սեւան Արք. Ղարիպեանի կատարուեցաւ «Անդաստան» ի Ս. Յակոբ: Ապա Միաբանութիւնը Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ մեկնեցաւ Ս. Փրկիչ եւ «Հրաշափառ»-ով մուտք գործեց մատուռէն ներս, ուր եւ մատուցուեցաւ օրուան Ս. Պատարագը: Ժամարարն էր Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքարեան, որ Պատարագի ընթացքին կարգաց նաեւ Յովհաննէս Ոսկեբերանի Հոգեգալստեան ներբողը: Պատարագի վերջաւորութեան նախագահութեամբ Տ. Սեւան Արք. Ղարիպեանի կատարուեցաւ Հոգեհանգըստեան կարգ, հանգուցեալ Պատրիարքաց, Լուսարարապետաց եւ միաբանից հոգիներուն ի հանգիստ:

Կէսօրէ ետք, Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեանի գլխաւորութեամբ Միաբան Հայրեր մեկնեցան Սիոն լեռ, այցելեցին վերջին ընթրեաց վերնատուն: Օրուան դէպքին պատմական վայրը կատարուեցաւ երեկոյեան ժամերգութիւն:

Շաբաթ, 18 Յունիս. Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Արտէմ Բճնյ Աբրահամեան:

Կիրակի, 19 Յունիս. Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքարեան: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան:

Կէսօրէ ետք, Նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Երկուշաբթի, 20 Յունիս. Սրբոց Կուսանաց շինութեան հիմնաքարն էր Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Հրեշտակապետաց, իսկ Ս. Պատարագը մատուցուեցաւ եկեղեցւոյ աւանդատան՝ Ս. Հովսիմէի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքարեան:

Ուրբաթ, 24 Յունիս. Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 25 Յունիս. Ս. Գրիգորի Լուսաւորչին: Յիշատակ ելանելոյն ի վիրապէն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր տաճարի աւանդատան՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի խորանին վրայ:

Ժամարարն էր Տ. Խաղ Վրդ. Ժունտուրեան:

Նոյն օրը երեկոյեան, Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Ամենապատիւ Պատրիարք Ս. Հայրը, ապա «Տէր ողորմեա՛» երգուեցաւ ծրնրադիր: Նախատօնակէն ետք կատարուեցաւ Կիսասարկաւագական ձեռնադրութիւն՝ ձեռամբ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր:

Կիրակի, 26 Յունիս. Տօն Կաթողիկէ եկեղեցւոյ Սուրբ Էջմիածնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Գէորգ Աբղ. Հայրապետեան: Յընթաց Ս. Պատարագի կատարուեցաւ Սարկաւագական ձեռնադրութիւն՝ ձեռամբ Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեանի, որ նաեւ նախագահեց «Հայր Մեր»-էն առաջ կատարուած «Հայրապետական մաղթանք»-ին:

Շաբաթ, 2 Յուլիս. Ս. Մեծին Ներսիսի եւ Խաղայ Եպիսկոպոսին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Ներսէհ Աբղ. Աղոյեան:

Կիրակի, 3 Յուլիս. Գ. Կիրակի զկնի Հոգեգալստեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Բարսեղ Ծ. Վրդ. Գալէմտէրեան: Ժամարարն էր Տ. Արշակ Աբղ. Ղազարեան:

Ուրբաթ, 8 Յուլիս. Նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 9 Յուլիս. Գիւտ Նշխարաց Սըրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Վանիկ Ծ. Վրդ. Մանկասարեան:

Կիրակի, 10 Յուլիս. Դ. Կիրակի զկնի Հոգեգալստեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ Նոր Երուսաղէմի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Տ. Կորին Վրդ. Բաղդասարեան:

Չորեքշաբթի, 13 Յուլիս. Նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց նախագահեց Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Հինգշաբթի, 14 Յուլիս. Ս. Թարգմանչաց վարդապետացն մերոց Սահակայ եւ Մեսրոպայ: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Գէորգ Աբղ. Հայրապետեան:

Շաբաթ, 16 Յուլիս. Սրբոց Տրդատայ Թագաւորին եւ Աշխէն Տիկնոջն եւ Խոսրովիդիստոյն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Վազգէն Աբղ. Ալէքեան:

Նոյն օրը երեկոյեան Նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց նախագահեց Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Կիրակի, 17 Յուլիս. Գիւտ Տփոյ Ս. Աստուածածնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան:

Ուրբաթ 22 Յուլիս. Նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց նախագահեց Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 23 Յուլիս. Սրբոց երկոտասան Առաքելոցն Քրիստոսի եւ Պօղոսի երեքտասաներորդ Առաքելոյն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Ներսէճ Աբղ. Ալոյեան:

Կիրակի, 24 Յուլիս. Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Բարսեղ Մ. Վրդ. Գալէմտէրեան: Ժամարարն էր Տ.

Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան:

Ուրբաթ 29 Յուլիս. Նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց նախագահեց Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 30 Յուլիս. Յիշատակ Տապանակին Հնոյ եւ Տօն Նորոյս Ս. Եկեղեցւոյ: Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Էջմիածին: Ժամարարն էր Տ. Կորին Վրդ. Բաղդասարեան:

Երեկոյեան, Վարդավառի Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը:

Իրիկնադէմին Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ պաշտուեցան «Եկեցէի» եւ «Հսկման» արարողութիւնները: Հանդիսապետն էր Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Կիրակի, 31 Յուլիս. Վարդավառ: Տօն Այլակերպութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Յետ Առաւօտեան ժամերգութեան կատարուեցաւ օրուան Անդաստանը: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Պատարագեց եւ քարոզեց Նիւ Նորքէն Ս. Աթոռ ժամանած Տ. Վահան Եպս. Յովհաննիսեան:

Պատրաստեց՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍՐԿ. ԽՈՒՏԱՎԵՐՏԵԱՆ

